ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԸ
(ՊԱՏՄԱԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ)

**Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2020

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ պ.գ.դ, պրոֆեսոր Ս. Ս. Մկրտչյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ. Հ. Մ. Չոլաքյան
պ.գ.թ. Հ. Ա. Աբրահամյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է մարտի 17-ին, ժամը 14.00-ին, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի 007 Հնագիտության և ազգագրության մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0025, ք. Երևան, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020 թ. փետրվարի 6-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
Պատմական գիտ. թեկնածու Ա. Է. Հարությունյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ատենախոսությունը նվիրված է հայ ժողովրդական քրիստոնեության մեջ լայնորեն տարածված Թուխ Մանուկ սրբավայրերի և պաշտամունքի ուսումնասիրությանը: Թեև այդ սրբավայրերը գոյություն ունեն Հայաստանի մեծ մասում, սակայն դրանք մինչ այժմ գրեթե ուսումնասիրված չեն, իսկ առկա մի քանի հոդվածները հիմնականում կատարված են XIX դ. երկրորդ կեսի ազգագրական աղբյուրների հիման վրա:

Մի կողմից՝ Թուխ Մանուկների պաշտամունքը, լինելով կենդանի, անխուսափելիորեն ենթարկվում է փոփոխությունների, առաջանում են նոր առասպելաբանություն, պաշտամունքի նոր տարրեր, հավատալիքային նոր դրսևորումներ: Մյուս կողմից՝ ժողովրդական շատ այլ երևույթների նման Թուխ Մանուկի պաշտամունքի հետ կապված որոշ տարրեր այսօր մոռացության վտանգի տակ են: Ուստի՝ այդ սրբավայրերի և պաշտամունքի՝ հնարավորինս համապարփակ ուսումնասիրությունն ու վերլուծությունը կարևոր տեղ են զբաղեցնում հայագիտության բնագավառում:

Աշխատանքի նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է հնարավորինս համակողմանիորեն ներկայացնել Թուխ Մանուկ սրբավայրերը, դրանց տարածվածությունը, գործառույթները, պաշտամունքը՝ ծիսական արարողությունները, հավատալիքային և բանահյուսական նյութը, այդ ամենի հիման վրա նաև փորձել դուրս բերել Թուխ Մանուկի կերպարը:

Այդ իսկ պատճառով հատուկ ուշադրություն է դարձվել թեմային առնչվող հետևյալ խնդիրներին և հարակից երևույթներին՝

ա. Թուխ Մանուկի պաշտամունքին վերաբերող գրավոր աղբյուրների ուսումնասիրություն,

բ. Թուխ Մանուկ սրբավայրերի գործառութային, հավատալիքային, բանահյուսական տվյալների դասակարգում,

գ. Թուխ Մանուկ ավետարանների դիտարկում ընդհանուր համալիրի մեջ,

դ. Թուխ Մանուկ սրբավայրերի և պաշտամունքի ներքին համեմատություն,

ե. Թուխ Մանուկ սրբավայրերի ու պաշտամունքի և ժողովրդական այլ սրբավայրերի ու պաշտամունքների համեմատություն, այլ սրբավայրերի հետ Թուխ Մանուկ սրբավայրերի առնչությունների քննություն,

զ. Թուխ Մանուկ սրբավայրերի հետազոտություն ուխտագնացությունների համալիրում,

է. Ս. Թուխ Մանուկ կերպարի բազմակողմանի դիտարկում:

Սկզբնաղբյուրների և գրականության տեսություն: Թեև Թուխ Մանուկ սրբավայրերը ամենատարածվածներից են Հայաստանում, բայց դրանց մասին մինչև այժմ որևէ մենագրություն գրված չէ, իսկ թեմային վերաբերող վերլուծական հոդվածները չեն հասնում մեկ տասնյակի: «Թուխ Մանուկ» անունը հիշատակող հայտնի ամենահին աղբյուրներն են մի քանի ձեռագիր հիշատակարանները, Հակոբ Մեղապարտի «Ուրբաթագիրքը», Ղ. Ինճիճյանի «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի՝ Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկոյ եւ Ամրիկոյ. մասն առաջին. Ասիա»

և Հ. եպս. Շահխաթունյանցի «Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ» աշխատությունները:

XIX դ. երկրորդ կեսից մինչև XX դ. սկզբի բազմաթիվ նյութերում առկա են Թուխ Մանուկների մասին հիշատակություններ: Կարևոր աղբյուրներ են Գ. եպս. Սրվանձտյանցի, Քաջբերունիի, Մ. արք. Սմբատյանցի, Դ. Խաչկյանի, Մ. Մկըրյանի, Կ. Մկրտչյան Մշեցիի, Ս. Հայկունիի, Գ. Շերենցի, Մ. Միրախորյանի, Ե. Լալայանի, Ե. Մելիքյանի, Թ. Թորամանյանի և ուրիշների աշխատությունները: Թուխ Մանուկների տոնածիսական դրսևորումների հիմնական աղբյուրն է Վ. Տեր-Մինասյանի աշխատությունը: Խորհրդային տարիներին Թուխ Մանուկների մասին ամենաշատ տեղեկություններ պարունակում է Ս. Խանզադյանի քառահատոր «Հայրենապատում» աշխատությունը՝ որտեղ կան հուշեր Խորհրդային Հայաստանի բնակավայրերի, Նախիջևանի, Ղարաբաղի և Ռուսաստանի հայակական օջախների մասին:

Բացի սկզբնաղբյուր հանդիսացող տեղեկություններից՝ միևնույն ժամանակաշրջանում մի շարք մասնագետներ փորձել են բացատրել Թուխ Մանուկի երևույթը:

Թուխ Մանուկների մասին առաջին վերլուծության փորձը կատարել է Ա. Մնացականյանը: Այս հոդվածագիրը մինչև այժմ ամենահանգամանալից մոտեցումն է ցույց տվել քննվող հարցի վերաբերյալ, սակայն նրա հոդվածը ևս զուրկ չէ բացթողումներից: Մասնավորապես, հայ բանահյուսության մեջ հայտնի բոլոր մանուկներին Մնացականյանը անվերապահորեն համարում է Թուխ Մանուկ, իսկ պաշտամունքը՝ նախաքրիստոնեական:

Հ. Մարտիրոսյանը, Հ. Իսրայելյանը և Ս. Հարությունյանը փորձում են Թուխ Մանուկները դիտարկել ժայռապատկերների, երկվորյակ աստվածությունների և ջրի պաշտամունքի ներքո:

Թուխ Մանուկների ֆենոմենի մասին գիտական հոդվածների հիմնական մասը ամփոփված է «Թուխ Մանուկ (նստաշրջանի նյութեր)» գրքում: Ջ. Ռասելը, Մ. արք. Աշճյանը, Հ. Հակոբյանը, Ա. Պետրոսյանը, Ա. Այդինյանը փորձել են հասկանալ Թուխ Մանուկի ֆենոմենը, գտնել այս պաշտամունքի հնագույն ակունքները:

Առանձին տեղ է զբաղեցնում Ա. Քալանթարյանի և Հ. Սարգսյանի կողմից կազմած Թուխ Մանուկների տարածվածության քարտեզը:

Հ. Խառատյանը բավական մանրամասն անդրադարձել է Թուխ Մանուկների պաշտամունքին՝ հիմնականում ամփոփելով նախորդ ուսումնասիրությունները:

Գ. Մարտոյանն իր մի աշխատանքում փորձում է Թուխ Մանուկին կապել Օձամանուկների հետ, իսկ մյուս աշխատանքում Թուխ Մանուկին համարում է Արև Մանուկի պաշտամունքային վերապրուկ:

Արևմտյան Հայաստանի Թուխ Մանուկների մասին արժեքավոր տեղեկություններ են պարունակում Գ. Բադալյանի կողմից հրատարակված Մեծ Եղեռնի նախօրեին Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդական նկարագրին վերաբերող հոդվածաշարի մի քանի մասերը:

Թուխ Մանուկի մասին մի քանի տվյալներ հեղինակի կողմից հայտնաբերվել են ՀՀ ԳԱԱ ՀԱԻ արխիվում: Արևմտյան Հայաստանի Թուխ Մանուկների մասին տեղեկություններ ենք քաղել նաև ՀՅԴ Բոստոնի արխիվից:

Աշխատանքի հենքը կազմում են 2011-2018 թթ. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտարշավային խմբի (ղեկավար՝ Լ. Սիմոնյան) կողմից հետևողականորեն ուսումնասիրված ՀՀ տարածքում գտնվող ժողովրդական սրբավայրերը, այդ թվում և Թուխ Մանուկները: Թուխ Մանուկներին վերաբերող դաշտային ազգագրական նյութեր (ԴԱՆ) են հավաքվել Երևան քաղաքում, Արագածոտնի, Կոտայքի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Շիրակի, Վայոց ձորի և Լոռու մարզերում: Այդ ընթացքում գրանցել ենք 196 Թուխ Մանուկ սրբավայրեր:

Ատենախոսության մեթոդաբանությունը: Մեթոդաբանական հիմքը ինդուկտիվ մեթոդն է՝ տեղական երևույթների ուսումնասիրությունից դեպի ընդհանուրը: Էմպիրիկ մասը կատարվել է դիտման, հավաքագրման և գրավոր ու բանավոր ազգագրական նյութի ուսումնասիրության մոտեցմամբ: Որպես օժանդակ մեթոդներ կիրառվել են հերմենևտիկ-ֆենոմենոլոգիական, գործառութային, համեմատական, դասակարգման մոտեցումները: Աշխատանքի՝ նյութի դասակարգման և վերլուծության փուլերում օգտագործվել է նաև կառուցվածքաբանական մոտեցումը կամ դրա որոշ մեթոդները:

Ատենախոսության մեջ օգտագործված դաշտային նյութերը գրանցվել են հատուկ մշակված հարցաթերթի օգնությամբ. գրանցվել են ինչպես սրբավայրերը՝ իրենց տեղագրությամբ և կառույցներով, այնպես էլ դրանց ուխտագնացության ժամկետներն ու ձևերը, դրանց շուրջ եղած պաշտամունքային տարրերը և բանահյուսությունը:

Ուսումնասիրության գիտական նորույթը: Առաջին անգամ ներկայացվում է Թուխ Մանուկ սրբավայրերին վերաբերող պատմական, ազգագրական և բանահյուսական հիմնական նյութը մինչև XXI դ. սկիզբը: Ներկայացվում են Արևմտյան Հայաստանի և ՀՀ տարածքների (գործող, լքված և անհետացած) Թուխ Մանուկ սրբավայրերի աղյուսակները և դրանց զգալի մասը՝ նկարագրությունների և վերլուծությունների տեսքով:

Ատենախոսության մեջ առաջին անգամ համակողմանիորեն ներկայացվում է Թուխ Մանուկ սրբավայրերի պաշտամունքային համալիրը՝ ուխտագնացությունները, այդ սրբավայրերի գործառույթները, այնտեղ կատարվող ծեսերը, դրանց վերաբերող հավատալիքները: Կատարվում է համեմատություն Թուխ Մանուկների և ժողովրդական այլ սրբավայրերի միջև:

Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվում թեմայի վերաբերյալ նոր, քիչ հայտնի արխիվային, բանահյուսական, դաշտային նյութը: Դիտարկվում և դասակարգվում են Թուխ Մանուկներին առնչվող երազները և ենթարկվում են մասնակի վերլուծության:

Դուրս են բերվում Թուխ Մանուկի կերպարի հիմնական կողմերը:

Հետազոտության կիրառական նշանակությունը: Սրբավայրերի և մասնավորապես Թուխ Մանուկների մանրամասն ուսումնասիրությունն ունի այն

կարևորագույն նշանակությունը, որը կարող է նպաստել հայ ժողովրդական մշակույթի պահպանմանն ու փոխանցմանը սերունդներին:

Սույն աշխատանքը կարող է նպաստել ազգագրագետների, բանագետների, կրոնագետների, ժողովրդական քրիստոնեությամբ, սրբավայրերով, պաշտամունքով և հավատալիքներով զբաղվողների, էթնոհոգեբանների և գիտության այլ ոլորտներով զբաղվող մասնագետների հետագա հետազոտություններին:

Աշխատանքի փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը. Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արդիական ազգաբանության և էթնոսոցիոլոգիայի բաժինների կողմից:

Ատենախոսության հիմնական դրույթները քննվել են հեղինակի հրատարակած գիտական աշխատանքներում, գիտաժողովներում և բանախոսությունների ընթացքում:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից և հավելվածից: Առաջին գլուխը («Թուխ Մանուկ սրբավայրերի պատմական հիշատակությունները») բաղկացած է երեք ենթագլխից: Երկրորդ գլուխը («Թուխ Մանուկ սրբավայրերի պաշտամունքը») բաղկացած է չորս ենթագլխից: Երրորդ գլուխը («Թուխ Մանուկ սրբավայրերի հետ կապված հավատալիքները և բանահյուսությունը») բաղկացած է չորս ենթագլխից: Ատենախոսության եզրակացություններում տրված են Թուխ Մանուկ սրբավայրերի ուսումնասիրության եզրահագումները: Հավելվածը ներառում է՝ 1. Թուխ Մանուկ սրբավայրերի տարածվածության աղյուսակներ՝ ըստ ՀՀ մարզերի և Արևմտյան Հայաստանում ժամանակին եղած սրբավայրեր՝ ըստ գավառների, 2. Թուխ Մանուկի վերաբերյալ բանահյուսական նյութեր, 3. Թուխ Մանուկ սրբավայրերի լուսանկարներ, 4. Թուխ Մանուկ սրբավայրերի քարտեզ:

Ներածության մեջ քննարկվել են մեթոդաբանական հիմնական խնդիրները և մոտեցումները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1. Թուխ Մանուկների մասին հիշատակությունները մինչև XIX դ. երկրորդ կեսը

Թուխ Մանուկ և Ս. Մանուկ անվամբ ամենահին սրբավայրերը գլխավորապես կապված են Սուրբ Նշանների հետ: Դրանց մասին մեզ են հասել չնչին տվյալներ, երբեմն միայն անվան տեսքով:

Քաջբերունիքի (Արևմտյան Հայաստան) Նվնդի Նորշինա գյուղի մերձակայքում եղել է Մանուկ Սուրբ Նշան կամ Նորշինա անապատը, որը հիշատակվում է 1390 թ.-ից:

Որպես երևույթ Թուխ Մանուկն առաջին անգամ հիշատակվում է հայերեն առաջին տպագիր՝ Հակոբ Մեղապարտի 1512 թ. տպագրած «Ուրբաթագրքում»:

Այդտեղ զետեղված ամենահին հմայիլներից մեկում Ճալեթա Ս. Նշան Թուխ Մանուկը նշված է ի թիվս այլ Սուրբ Նշանների: Այս Թուխ Մանուկը հիշատակվում է նաև XV դ. հիշատակարաններում:

Հնագույն մի Թուխ Մանուկի մասին տեղեկություն՝ միայն անունը, հաղորդում է Երեմիա Չելեբի Քյոմյուրճյանի՝ 1691 թ. կազմած քարտեզը – Ուխտ (ուխտավայր) Արեխաց Թուխ Մանուկ:

Դիարբեքիրի շրջանում մեծ համբավ ուներ Սադուգեղի Թուխ Մանուկ եկեղեցին, որը հայտնի և մեծ ուխտավայր էր: Սադուգեղն այդ սրբավայրի անունով կոչվում էր նաև Թուխ Մանուկ Խաչ:

Վայոց ձորի Ծուկրիկ գյուղի (այժմ՝ Բոլորաբերդ) Թուխ Մանուկ եկեղեցին հավանաբար կառուցվել է XVII դ. կես – XVIII դ. սկզբին: Սա ամենահին վկայությունն է, որ ի սկզբանե կառուցվել է Թուխ Մանուկ անվամբ եկեղեցի, այսինքն՝ օծվել է այդ անվամբ:

Արևելյան Հայաստանի ամենահին Թուխ Մանուկ սրբավայրերից մեկը Մաստարայի Թուխ Մանուկ մատուռն է, որը, համաձայն Հովհաննես եպս. Շահխաթունյանցի աշխատության ժամանակ արդեն ավերակ էր XIX դ. սկզբին:

Երևան քաղաքի տարածքում գտնվող Նորագավթի Թուխ Մանուկ սրբավայրի մասին տեղեկություններ ունենք XIX դ. առաջին կեսից:

2. Թուխ Մանուկ սրբավայրերի պաշտամունքը XIX դ. երկրորդ կեսից մինչև XX դ. առաջին քառորդը

Եթե հին դարերից մեզ գրեթե տեղեկություններ չեն հասել Թուխ Մանուկ սրբավայրերի մասին, ապա XIX դ. երկրորդ կեսից այդ տեղեկությունները բազմաթիվ են: Պատմական տվյալների բացակայության պատճառով մենք չենք կարող Թուխ Մանուկի պաշտամունքը դիտարկել XIV դ.-ից վաղ, առավել ևս վերագրել նախաքրիստոնեության ժամանակաշրջանին: Անվան ստուգաբանությունը այլ ժողովուրդների առասպելական և կրոնական մոտիվներով բացատրելը, մեր կարծիքով, հավաստի տեղեկություններին չի փոխարինում:

Թուխ Մանուկ սրբավայրերը լայնորեն տարածված են եղել Հայկական լեռնաշխարհում, ըստ աղբյուրների՝ հատկապես Վանի շրջակայքում, Հարքում, Տարոնում, Բագրևանդում, Սասունում, Կարինում և այլն:

Աղբյուրներից հայտնի մի քանի Թուխ Մանուկ սրբավայրեր այսօր կոչվում են այլ անվանումներով, և ժողովուրդը ամենևին չի հիշում դրանց նախկին՝ Թուխ Մանուկ անվանումը:

Թուխ Մանուկները եղել են տարբեր բնույթի պաշտամունքավայրեր, որտեղ հիմնականում ուխտի են գնացել կանայք և հիվանդները, քանի որ դրանք զորավոր զավակատու և բժշկող սրբավայրեր էին: Թուխ Մանուկներ ուխտի էին գնում նաև տարբեր տոների ժամանակ, հատկապես՝ Խաչվերացին, Ս. Աստվածածնի տոնին և Համբարձմանը:

Աղբյուրներում ոչ միայն նկարագրվում են որոշ սրբավայրեր, այլև հայտնվում են կարծիքներ դրանց մասին, ըստ որոնց՝ Թուխ Մանուկները քրիստոնյա

նահատակներ են, նախաքրիստոնեական պաշտամունքի, նախնիների պաշտամունքի, ջրի պաշտամունքի մնացորդներ են: Աղբյուրներում հիշատակվում են նաև Թուխ Մանուկ անունով մի քանի ավետարաններ, որոնք Թուխ Մանուկի պաշտամունքի յուրահատուկ դրսևորում են:

3. Թուխ Մանուկ սրբավայրերի աշխարհագրությունը ՀՀ-ում (XX-XXI դդ.)

ՀՀ-ում մեր ունեցած տվյալներով ներկայումս հայտնի է 196 (սրա մեջ ներառել ենք նաև ներկայումս այլ անուն կրող կամ այժմ գոյություն չունեցող) Թուխ Մանուկ սրբավայրեր, որոնցից ամենաշատը՝ Արագածոտնի մարզում: Հաջորդ ամենամեծ թվով այդ անվամբ սրբավայրեր կան Գեղարքունիքի, Շիրակի և Կոտայքի մարզերում: Շատ ավելի քիչ են Թուխ Մանուկ սրբավայրերը Լոռու, Արարատի և Վայոց ձորի մարզերում: Մեկ սրբավայր կա Արմավիրի մարզում: Վերջապես, չորս Թուխ Մանուկ և մեկ Ս. Մանուկ հայտնի են Երևան քաղաքում:

Առայժմ մեր կողմից ուսումնասիրություն չի անցկացվել Ջավախքում, և այնտեղ առկա Թուխ Մանուկների մասին մենք չունենք տեղեկություններ: Գրավոր աղբյուրներում հաջողվել է գտնել տեղեկություններ Ջավախքում եղած մի քանի Թուխ Մանուկ սրբավայրերի մասին՝ Դիլիֆ և Խորենիա գյուղերում:

Մեր օրերում Թուխ Մանուկ անվամբ սրբավայրերը տարբերվում են իրենց արտաքին տեսքով: Դրանց զգալի մասը ոչ մեծ մատուռ-տնակներ են, որոնց մեջ պահվում է գլխավոր սրբությունը (մեծ մասամբ՝ քարակերտ), և որոնց մեջ կամ շուրջ կատարվում են հիմնական պաշտամունքային արարողությունները: Մի մասը կանոնավոր եկեղեցիներ են: Թուխ Մանուկ սրբավայրերը կարող են լինել ավետարաններ, տապանաքարեր, խաչքարեր, քառակողմ կոթողներ, մենհիրներ, դոլմեններ, խաչքարերի, բարավորների, ծիսական շինությունների և կոթողների դեկորի մասեր և այլն: Շատ դեպքերում հնարավոր էլ չի պարզել, թե որտեղից են դրանք բերվել տվյալ սրբավայրը:

Հայաստանի Հանրապետության տարածքում առկա Թուխ Մանուկ սրբավայրերի գերակշիռ մասը ստեղծվել կամ անվանվել են Թուխ Մանուկ Արևմտյան Հայաստանից և Պարսկաստանից գաղթածների կողմից 1828 թ. հետո՝ տարբեր ժամանակահատվածներում: Հատկապես շատ են Թուխ Մանուկ սրբավայրերը Մշո դաշտից, Բագրևանդից, Հարքից, Բասենից, Վանից և նրա շրջակայքից, Մակվից և Խոյից գաղթածների շրջանում:

ՀՀ Թուխ Մանուկ սրբավայրերի գերակշիռ մասը ստեղծվել է ավելի հին սրբավայրերի, եկեղեցիների, մատուռների հիմքի վրա: Երբ գաղթականները եկել են բնակության նոր վայրեր, հաճախ տեղի եկեղեցիները ավերված են եղել կամ մոռացված է եղել դրանց անունը, և վերաբնակները վերակառուցելով (իսկ երբեմն թողնելով անփոփոխ, օր. Արագածոտնի Ակունք գյուղի XII-XIII դդ. ավերակ մատուռը) անվանել են դրանք Թուխ Մանուկ: Որոշ դեպքերում նույնիսկ կանգուն վանքը կամ եկեղեցին ստացել է Թուխ Մանուկ անվանումը, օր. Մեղրաձորի Թուխ Մանուկ-Թեժառույք վանքը:

Թեև Թուխ Մանուկ սրբավայրերն ունեն էթնիկական տարածվածություն, այնուամենայնիվ Հայաստանի Հանրապետության տարածքում Թուխ Մանուկ սրբավայրեր առայժմ չեն հայտնաբերվել ներկայիս Սյունիքի և Տավուշի մարզերում, ինչպես նաև Արցախում: Թուխ Մանուկների մասին տեղեկություններ մեզ առայժմ չի հաջողվել գտնել նաև պատմական Հայաստանի որոշ նահանգներում և գավառներում, հայաշատ վայրերում՝ Տայք, Երզնկա, Դերսիմ և Խարբերդ, Մալաթիա, Սեբաստիա, Կիլիկիա, Մուսա լեռ և Քեսաբ և այլն: Սփյուռքում համանուն սրբավայրերի գոյության մասին ևս առայժմ տվյալներ չունենք:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ
1. Թուխ Մանուկ սրբավայրերի ուխտագնացությունները և դրանց ժամկետները

Ուխտագնացությունը, սրբավայր այցելելը ժողովրդական քրիստոնեության պաշտամունքի ձևերից է, որը լայն տարածում ունի հայոց մեջ:

Սրբավայր այցելության հիմնական դրդապատճառը կրոնական տոն կամ ուխտ նշելն է: Չնայած այն բանին, որ ուխտ անելու ու սրբավայր գնալու համար Հայոց եկեղեցին հաճախ հատուկ օրեր չի սահմանել, ժողովուրդը գրեթե ամեն սրբավայրի համար ունի ուխտագնացության իր հաստատագրված օրերը:

Տարբեր վայրերում գտնվող Թուխ Մանուկ սրբատեղիների ուխտագնացության ժամկետները տարբեր են: Յուրաքանչյուր Թուխ Մանուկ ունի ուխտագնացության՝ ժողովրդի կողմից հաստատված իր ժամկետը: Թուխ Մանուկները մեծ մասամբ տեղական սրբավայրի նշանակություն ունեն, սակայն կան նաև այնպիսիք, որոնց ուխտագնացությունները զանգվածային բնույթ ունեն, այդտեղ այցելում են նաև շրջակա և հեռավոր բնակավայրերից, նույնիսկ արտերկրից:

Այցելությունը Թուխ Մանուկ սրբավայրեր կարելի է դասակարգել ըստ ժամկետի. ա. եկեղեցական որևէ տոնի համալիրում, բ. հատուկ օր, որը կարող է լինել ինչպես շարժական, այնպես էլ անշարժ, գ. ըստ շաբաթվա օրերի կարգավորվող անհատական կամ ընտանեկան ուխտ կամ այցելություն, դ. դիպվածային այցելություն:

Թուխ Մանուկ սրբավայրեր առավել հաճախ ուխտի են գնում եկեղեցական հետևյալ տոների համալիրում՝ Վարդավառ, Խաչվերաց, Համբարձում, Ս. Աստվածածնա տոն, Զատիկ, տաղավար տոների մեռելոցներ, Ս. Ծնունդ, Ս. Սարգսի տոն և այլն:

Դիպվածային այցելությունները լինում են այն դեպքերում, երբ հավատացյալը նախապես տեղեկություն չունի տվյալ սրբավայրի մասին կամ պատահական դիպվածով հայտնվում է դրա հարևանությամբ և այցելում է սրբավայրը: Հաճախ դրանք այն սրբավայրերն են, որ գտնվում են մեկուսի, հեռու ճանապարհներից ու գյուղերից, և ոչ տեղացիները այդտեղ այցելում են դիպվածաբար:

Ներկայումս սեռատարիքային մեծ տարբերություն չի նկատվում. սրբավայրեր այցելում են երկու սեռի անձինք և երեխաներից մինչև ծերունիներ: Հատուկ վարքագծի դրսևորում՝ սրբավայր ծնկաչոք, բոբիկ այցելություններ, մեզ չի հանդիպել, թեև պատմում են, որ դեռևս խորհրդային տարիներին պատահում էին նման դեպքեր: Որոշ տեղերում դեռևս կենդանի է մնում մուրազը իրականանալու համար ծիսական որոշակի գործողություններ կատարելու ժամանակ լռության պահպանումը:

2. Թուխ Մանուկ սրբավայրերի գործառույթները և ծեսերը

Ցանկացած սրբավայր ունի իր այցելության նպատակները, որոնք էլ կազմում են տվյալ սրբավայրի գործառույթները: Ժողովրդական սրբավայրերի գործառույթները սերտորեն կապված են այդ սրբավայրերի ուխտագնացությունների, հավատալիքների, ծեսերի, ավանդությունների ու ընկալումների հետ: Գործառույթներն ուղղակիորեն բխում են սրբավայր այցելելու և ծիսակատարությունների նպատակներից, սակայն չի նշանակում, որ ցանկացած սրբավայր կարելի է այցելել ցանկացած նպատակով և այդ նպատակը կիրականանա: Ավելին, եթե սրբավայրը բուժիչ է, չի նշանակում, որ այն բուժում է ցանկացած հիվանդություն: Այս նկատառումներով է թերևս պայմանավորված, որ գոյություն ունեն «հատուկ մասնագիտացված» սրբավայրեր:

Սրբավայրերի օժանդակությունը ստանալու համար անհատական և համայնական ուխտագնացությունների միջոցով, զանազան նպատակներով և փափագներով այցելությունների ժամանակ սրբավայրերում կատարվում են տարաբնույթ ծեսեր:

Թեև Թուխ Մանուկ սրբավայրերը բավականին տարբերվում են իրարից, սակայն ծեսի առումով ակնառու է բոլոր Թուխ Մանուկների որոշակի ընդհանրությունը: Այդ ընդհանրությունը պայմանավորված է ուխտագնացության և ծիսակատարության դրդապատճառներով, քանի որ դրանք հիմնականում նույն նպատակներն են հետապնդում: Առհասարակ, տարբեր են ծեսերի որոշ մանրամասներ, բայց ոչ նպատակները: Օրինակ՝ մի սրբավայրում բուժման նպատակով լողանում են Թուխ Մանուկի ջրում, մյուսում բավական է միայն լվացվել, երրորդում բուժման ծեսի կենտրոնական տարրը հողն է և այլն:

2.1. Մատաղի ծիսակարգ: Հայկական ժողովրդական քրիստոնեության կարևորագույն տարրերից է մատաղի արարողությունը: Շատ քիչ բացառությամբ, մնացած բոլոր Թուխ Մանուկ սրբավայրերում առկա են մատաղի արարողություններ: Հաճախ անձնական խնդրով մատաղ անելու համար ընտրվում է հենց հանրային ուխտագնացության օրը, սրբի հատուկ օրը, երբ սրբավայրի զորությունն իբրև թե բազմապատկվում է: Օտարներին, այդ թվում՝ մուրացկաններին, թշվառներին բաժանված և մտերիմների հետ կիսված հացը սրբի բաժինն է և ապահովում է սրբի հովանավորությունը:

Ժողովրդական սրբավայրերը՝ մասնավորապես Թուխ Մանուկները, սովորաբար չեն ունենում հոգևորական-ծառայողներ: Հատուկ առիթների դեպքում, այդ

թվում՝ մատաղն օրհնելու նպատակով, այդտեղ կարող են հրավիրվել քահանաներ: Մատաղի ծեսի մեջ քահանան կատարում է կարևորագույն այն արարողությունը, որը բնորոշում է բուն հայկական մատաղը՝ աղի օրհնությունը: Հիմնականում մեկ անգամ օրհնված աղը պահվում է սրբավայրի մեջ կամ դրա տարածքի որևէ մասում և կարող է գործածվել արդեն առանց հոգևորականի միջամտության: Կենդանուն մորթելուց առաջ դրա բերանի մեջ են լցնում մի պտղունց, մի բուռ կամ երեք պտղունց աղ:

Հաճախ մատաղն ունի երկու փուլ. նախ՝ մատաղ են անում, որպեսզի փափագն իրականանա, հետո՝ մատաղ են անում, երբ փափագն իրականացել է, և պետք է շնորհակալություն հայտնել սրբին:

Թուխ Մանուկ սրբավայրերում կատարվող մատաղն ունի երկու հիմնական դրսևորում.

ա. Միանվագ մատաղ, երբ որևէ պաշտոնյա, մեծահարուստ կամ ուղղակի կարևոր ուխտ-փափագ ունեցող անձ հոգում է մեծ հանրային մատաղի բոլոր ծախսերը և հետևում է, որ այն բաժանվի համայնքի բոլոր անդամների միջև: Սովորաբար այս նպատակներով ընտրվում է ցուլ կամ մի քանի գառ կամ խոյ:

բ. Անհատական կամ ընտանեկան մատաղ, երբ մեկ ընտանիք սեփական ցանկությամբ և միջոցներով նվիրաբերում է երբեմն հատուկ նպատակով գնված և մեծացրած կենդանի և հետագայում բաժանում է դրա միսը տարբեր դեպքերում երեքից տասներկու (առավել հաճախ՝ յոթ) ընտանիքների կամ անհատ անձանց, իսկ մնացած մսով սեղան են գցում և հրավիրում հյուրեր:

2.2. Բժշկություն: Բժշկությունը Թուխ Մանուկ սրբավայրեր ուխտագնացություններ կատարելու հիմնական դրդապատճառներից մեկն է: Այստեղ կատարվող բժշկական ծիսական արարողությունները նկարագրվում են XIX դ. ազգագրական նյութերում, ինչպես նաև բազմաթիվ նման ծեսեր մենք գրանցել ենք մեր դաշտային ուսումնասիրությունների ընթացքում: Այս կամ այն Թուխ Մանուկը կարող էր ունենալ հատուկ բուժական ներգործություն, «մասնագիտացված» լինել տվյալ հիվանդությունների կամ վերքերի հարցում:

Թուխ Մանուկ սրբավայրերը հիմնականում բուժում են մաշկային հիվանդություններ և վերքեր, տարատեսակ դողեր և տենդեր, աչքի հիվանդություններ, մարմնի թուլության և անդամների անշարժության և, հատկապես, մանկական հիվանդություններ: Բուժումը կատարվում է ուխտագնացությունների ժամանակ՝ աղոթքների, մատաղների, սրբավայրի հողի, ջրի (եթե կա), ավելի և այլ զորավոր միջոցներով:

2.3. Զավակատվությունը և երեխաների խնամքը: Զավակատվությունը և երեխաների խնամքի ապահովումը Թուխ Մանուկ սրբավայրեր այցելելու ամենահիմնական նպատակներից է, եթե ոչ ամենաէականը: Ըստ Վ. Տեր-Մինասյանի՝ Թուխ Մանուկները երեխաների պաշտպան ոգիներն են:

Որոշ բացառություններով՝ բոլոր դեպքերում իրականացվում է գրեթե նույն ծիսակատարությունը՝ ուխտագնացություն, մատաղ, մոմ վառել, խունկ ծխել և աղոթել: Հաճախ զավակատվության համար այս կամ այն Թուխ Մանուկ

սրբավայրին դիմելը պայմանավորված է երազով, երբ սուրբը գալիս է երազում և ավետում, որ շուտով երեխա է ծնվելու:

Թուխ Մանուկ սրբավայրերը պարգևում են հիմնականում տղա երեխաներ: Թուխ Մանուկի պատվին երեխային հաճախ անվանում են Մանուկ, նույնիսկ՝ Թուխմանուկ: Սակավ դեպքերում, եթե սրբավայրը աղջիկ է պարգևել, երեխայի անունը կարող են Թուխիկ դնել:

Բացի զավակատվությունից՝ Թուխ Մանուկ սրբավայրերն ապահովում էին նաև երեխաների խնամքը, որն արտահայտվում էր ոչ միայն բուժումով: Սրբավայրը կարող էր ազատել երեխային մահից պատահարների ժամանակ: Որոշ Թուխ Մանուկ սրբավայրեր երեխաների համար կարող էին երկարակեցություն ապահովել:

Կան նաև այնպիսիք, որ կարող են ունենալ հազվադեպ հիվանդությունների բժշկման զորություն: Այսպես՝ Նոր Արթիկի Թուխ Մանուկ սրբավայրը հայտնի է որպես կանացի «թփղի» հիվանդության բժշկող: Թփղիի դեպքում երեխաներն անընդհատ մահանում են ծնվելուց, իսկ այս սրբավայր այցելելուց և համապատասխան մատաղ ու ծեսեր անելուց հետո ծնված երեխաները ողջ են մնում:

Երեխաների պահպանության և խնամքի հետ է կապված նաև Վարդենիկի Թուխ Մանուկի հրաշալի զորությունը. այն առատացնում է կրծքի կաթը:

2.4. Զինվորի պաշտպաններ: Զինվորի պաշտպաններ են գրեթե բոլոր Թուխ Մանուկ սրբավայրերը: Որոշ սրբավայրերից, որոնց գերակա գործառույթներից է զինվորների պահպանությունը, ռազմաճակատ կամ բանակ գնացողները քարեր են վերցնում և պահում ծոցում. սրբի ուժը պահպանում է քարեր ունեցողներին: Այդ սրբավայրերից են Ալափարսի, Լուսագյուղի, Արագյուղի, Մաստարայի, Քուչակի, Արևշատի, Հացաշենի Թուխ Մանուկները և այլն:

2.5. Մուրազի կատարում: Քանի որ բոլոր Թուխ Մանուկները համարվում են զորեղ մուրազատուներ, ապա գրեթե բոլորում կան երազանքի քարեր, խաչքարեր, տապանաքարեր, որոնց վրա գուշակություններ են անում. քարը քսում են և թողնում, եթե կպավ, մուրազը կիրականանա, եթե ոչ՝ չի լինի: Նույն հավատալիքը բնորոշ է նաև ժողովրդական գրեթե բոլոր սրբավայրերին:

2.6. Պտղաբերության ապահովումը: Վ. Տեր-Մինասյանի նկարագրած Վանում Խաղողօրհնեքին ու Ճրաքաղին կատարվող անդաստանի արարողության վերջում քահանան օրհնում է խաղողի այգիները: Համաձայն այս բարեմաղթանքի՝ խաղողը ցողված է (պտղաբերել է) «երկնքի լոյս Թուխ մանուկներէն», այսինքն՝ գոնե Վանում խաղողի պտղաբերության հովանավորներն էին Թուխ Մանուկները:

Թուխ Մանուկը օգնում էր պահպանել հացահատիկի բերքը սարսափելի մի աղետից, որն էր մորեխը (կիտուռը): Կիտուռի երգերը տարածված էին Մուշում և Ալաշկերտում, որտեղ կիտուռը, դատելով երգերից, շատ մեծ արհավիրք էր: Երբ կիտուռը հարձակվում էր ցորենով դաշտերի վրա, երգվում էին այդ ծիսական երգերը, որոնց միջոցով օգնության էին կանչում սրբերին, որպեսզի վերացնեն կիտուռին՝ փրկելով դաշտերը:

Որոշ վայրերում Թուխ Մանուկին էին դիմում նաև երաշտի դեպքերում:

2.7. Սիրահարների հովանավոր: Թուխ Մանուկը կարող էր լինել նաև սիրահարների հովանավոր, և նրա տարածված գործառույթներից էր սիրահարներին իրենց նպատակին հասցնելը: Ըստ Վ. Տեր-Մինասյանի՝ Թուխ Մանուկ սրբավայրերում կույսերն ու պատանիները, երիտասարդ զույգերը՝ համբույրով դրոշմված պսակներ էին թողնում՝ որպես հույս կամ հուշ ամուսնական պսակի:

Շատ վայրերում Համբարձման չորեքշաբթի օրը վիճակի համար կուժի մեջ հավաքում էին աղբյուրներից «պուտ-պուտ» ջուր և Թուխ Մանուկներից՝ մեկ-մեկ քարեր:

Բազմաթիվ Թուխ Մանուկ սրբավայրեր ունեին սիրահարներին իրենց նպատակին հասցնելու համբավ. ապահովում էին բարեհաջող ամուսնություն:

Սիրահարների հովանավոր են Կրասարի, Արճակի, Գեղհովիտի, Մոշաղբյուրի (Ձնջոլուի), Գետազատի, Սարատակի, Քուչակի, Ապարանի, Տուֆաշենի, Լեռնակերտի և այլ Թուխ Մանուկ սրբավայրերը:

Թուխ Մանուկի՝ որպես սիրահարների հովանավորի գործառույթն արտահայտված է նաև որոշ սիրային երգերում:

Ներքին Բասենի Գիլանտափ գյուղում էր գտնվում շրջանում շատ հայտնի Թուխ Մանուկ ավետարանը: Այն շատ զորավոր էր և մուրազատու: Տեղացիները երդվում էին այդ ավետարանով հատկապես՝ ամուսնության նպատակ ունենալիս:

2.8. Ջրի պաշտամունք: Առաջին հեղինակը, որ փորձում է կապել Թուխ Մանուկ սրբավայրերը ջրի պաշտամունքին, Դ. Խաչկյանն է (Խաչկոնց): Ըստ նրա՝ Թուխ Մանուկներն ընդհանրապես ճահճային տեղերում են լինում:

Ըստ Հ. Մարտիրոսյանի՝ բոլոր Թուխ Մանուկները գտնվում են ջրերի ակունքների մոտ, խոնավ տեղերում՝ անձրևներ ապահովելու նպատակով, քանի որ Թուխ Մանուկը թուխ ամպն է:

Ս. Հարությունյանը, հիմնվելով Դ. Խաչկյանի, Ա. Մնացականյանի և Հ. Մարտիրոսյանի կարծիքների վրա, համարում է, որ Թուխ Մանուկները երկվորյակների և ջրի պաշտամունք են:

Սակայն վերը հիշատակված հեղինակների այն պնդումը, որ գրեթե բոլոր Թուխ Մանուկ սրբավայրերը կառուցված են ջրերի մոտ, այնքան էլ չի համապատասխանում իրականությանը: Բազմաթիվ Թուխ Մանուկ սրբավայրերի մոտակայքում ջուր չկա, այսինքն՝ դրանք միշտ չէ, որ կառուցված են ջրերի մոտ, ավելին՝ դրանց մեծ մասը կապ չունի ջրի պաշտամունքի հետ:

Մյուս կողմից, որոշ Թուխ Մանուկներ, իրոք, կառուցված են սրբազան և բուժիչ համարվող ջրի ակունքների մոտ: Այսինքն՝ կարելի է ասել, որ որոշ Թուխ Մանուկ սրբավայրեր կապված են ջրի պաշտամունքի հետ, բայց ոչ ընդհանրացնել և բոլոր Թուխ Մանուկներին համարել ջրի պաշտամունքի դրսևորումներ:

2.9. Թուխ Մանուկ սրբավայրերն ու արհեստավորական միությունները: Թուխ Մանուկի մասին մի քանի հոդվածների հեղինակներ փորձում են Թուխ Մանուկին կապել արհեստավորների հետ: Այս փաստարկը հիմնված է այն տեսության վրա, որ Թուխ Մանուկի պաշտամունքն արտահայտվել է «կտրիճավորաց» միություններում, սրանք էլ իրենց հերթին հիմք են դարձել էսնաֆությունների (համքարությունների) համար:

Ա. Մնացականյանը առաջինն էր, որ երիտասարդների կամ կտրիճների եղբայրությունները կապեց Թուխ Մանուկի պաշտամունքին: Թուխ Մանուկների և արհեստավորների միջև կապը ավելի առաջ են տանում Ա. Քալանթարյանը և Հ. Սարգսյանը, Հ. Խառատյանը, Հ. Հմայակյանը, որոնց հիմնական աղբյուրը Կ. Սեղբոսյանի գիրքն է՝ նվիրված ալեքպոլցի արհեստավորներին: Սակայն, ըստ Սեղբոսյանի, առհասարակ բոլոր ալեքսանդրապոլցիները դիմում էին Գյումրու բոլոր սրբավայրերին (այլ ոչ թե միայն արհեստավորները ու միայն Թուխ Մանուկին), իսկ համքարություններում ընդգրկման համար մկրտելու մասին ոչինչ չի ասվում:

Ինչպես վկայում են XIX դ. գրավոր աղբյուրները, Թուխ Մանուկների դեպքում առկա է երեք գործոն, որոնք մեծ կասկածի տակ են դնում դրանց կապը արհեստավորների և առհասարակ երիտասարդական միությունների հետ:

ա. Թուխ Մանուկ սրբավայրերի գերակշիռ մասը եղել է և կա գյուղերում, իսկ գյուղերում չէին կարող լինել արհեստավորների միություններ:

բ. Բոլոր աղբյուրներում նշվում է, որ XIX դ. Թուխ Մանուկներին այցելում էին հիմնականում կանայք և հիվանդները: Ոչ մի խոսք չկա արհեստավորների հատուկ այցելությունների մասին:

գ. Երբեք ոչ մի էսնաֆություն Թուխ Մանուկ անունով հովանավոր սուրբ չի ունեցել:

3. Ս. Թուխ Մանուկ և Ս. Մանուկ ավետարանների պաշտամունքը

Թուխ Մանուկի պաշտամունքի յուրահատուկ դրսևորում էր նույն անունով Ավետարանների պաշտամունքը: Այդպիսի ավետարաններ հայտնի էին Առբերանի գավառի Գործոթ գյուղում (այն ընթերցում էր քահանան՝ հիվանդներին բժշկելու և Աստվածային պատժից ազատելու համար), Խնուսի Պուրնազ գյուղում, Կոտայքի Քարվանսարա գյուղում (1271 թ.), Ներքին Բասենի Գիլանտափ գյուղում (զորավոր էր և մուրազատու) հավանաբար այս Թուխ Մանուկ ավե տարանն էր հայտնի նաև Շիրակում:

Ժամանակին Աբովյան քաղաքում էր գտնվում Փերիայի Գովզ գյուղից բերված Թուխ Մանուկ ավետարանը: Այն հիշատակարան չունի, բայց հնագրության տվյալներով հավանաբար XVI-XVII դդ. ձեռագիր է: 1980 թ. այն նվիրել են Ս. Էջմիածնին՝ ուխտի համաձայն, ուր և այն գտնվում է այժմ: Այն պատկերազարդ է, վերջում ունի հետագայում գրված մի քանի հիշատակագրություններ: Ամեն տարի՝ օգոստոսի 28-ին, այդ ավետարանին ուխտի են գալիս Ս. Էջմիածին:

Ժամանակին Շիրակի մարզի Քեթի գյուղում և Գավառում նույնպես եղել է Թուխ Մանուկ ավետարան և սրբավայր, որոնց գտնվելու վայրն այժմ անհայտ է:

Հայաստանում հայտնի են մի քանի սրբավայրեր՝ Ս. Մանուկ (ավետարան) անվամբ, քանի որ այդ սրբավայրերում պահվել կամ հիմա էլ պահվում են Ս. Մանուկ անունով ավետարաններ: Նման ավետարաններ և սրբավայրեր հայտնի էին Բագրևանդի Ամատ գյուղում, Շիրակի Սառնաղբյուր (համարվում է բուժիչ և խափանում է վատ երազները), Լեռնագյուղ (ավետարանը գողացել են

երկրաշարժից առաջ, տեղն անհայտ է, բերվել է Բասենից) և Լեռնակերտ (համարվում է զավակատու) գյուղերում, Վարդենիսի Մխոյի տան Մանուկ Ավեդրանը (համարվում է բուժիչ), Կոտայքի Նոր Գեղի գյուղում:

Մեզ հայտնի են ևս երկու Ս. Մանուկ սրբավայր, որոնք, սակայն, կապված չեն եղել Ս. Մանուկ ավետարանների հետ:

4. Թուխ Մանուկ սրբավայրերի համեմատությունը ժողովրդական այլ սրբավայրերի հետ

Թուխ Մանուկ սրբավայրերի պաշտամունքը ժողովրդական քրիստոնեության դրսևորումներից է: Որպեսզի հասկանանք դրանց տեղը ժողովրդական քրիստոնեության համալիրում, պետք է դրանք համեմատության մեջ դնենք ժողովրդական այլ սրբավայրերի հետ:

Ժողովրդական այլ սրբավայրերի նման Թուխ Մանուկները ևս անպայմանորեն ինչ-ինչ տեսակի շինություններ չեն, ուստի տիպաբանորեն չեն կարող տարբերվել ժողովրդական այլանուն սրբատեղիներից: Այսինքն մենք միանշանակ չենք կարող ասել, որ այսինչ շինությունը, աղբյուրը, ծառը, գերեզմանը և այլն Թուխ Մանուկ է, եթե հաստատ տեղեկություն չունենք, որ այն հենց Թուխ Մանուկ է կոչվում ժողովրդի կողմից:

Ուխտագնացությունները, մատաղը, մուրազատվությունը, նպատակները, ծեսերի շատ բաղադրիչներ բնորոշ են բոլոր ժողովրդական սրբավայրերին՝ անկախ անվանումից, տիպից, տարածքից և այլն:

Թուխ Մանուկ սրբավայրերի ամենակարևոր գործառույթը, թերևս, զավակատվությունն է: Սակայն հզոր զավակատուներ են նաև Ս. Աստվածածինն ու Ս. Կարապետը: Զավակատու են որոշ Ս. Սարգիս, Ս. Գևորգ, Ս. Մինաս սրբավայրերը, Ծաղկեվանք-Կույս Վարվառը և այլն:

Թուխ Մանուկների մյուս կարևոր գործառույթը զանազան հիվանդությունների բուժումն է: Սակայն, ինչպես մյուս դեպքերում, դա ևս զուտ Թուխ Մանուկների բնորոշ գիծը չէ: Ժողովրդի մեջ հնուց ի վեր ընդունված է զանազան հիվանդությունների դեպքում, բացի բժշկական օգնությունից, դիմել տարբեր սրբերին ու սրբավայրերին: Ցանկացած սրբավայր այցելելու, ուխտագնացություններ կատարելու հիմնական նպատակներից է բժշկվելու ակնկալիքը:

Թուխ Մանուկ սրբավայրերից շատերն ունեն զինվորների հովանավորի գործառույթ: Բայց այս գործառույթը ևս բնորոշ է ոչ միայն Թուխ Մանուկ սրբավայրերին, այդպիսի գործառույթ ունեն, օրինակ, Մաստարայի Շեկ ավետարանը, Արագածի Կարմիր ավետարանը, Վարդենիկի Ս. Աստվածածինը և այլն:

Թուխ Մանուկների և ժողովրդական այլ սրբավայրերի համեմատական դիտարկումը թույլ է տալիս եզրակացնել, որ այն գործառույթները, որոնք բնորոշ են Թուխ Մանուկներին, զուտ այդ սրբավայրերի առանձնահատկությունները չեն միայն: Այս դրույթը վերաբերում է նաև սրբավայրերի կառույցների տիպին: Այսինքն՝ Թուխ Մանուկները սրբավայրերի առանձին տեսակներ չեն, այլ հայ ժողովրդական քրիստոնեական մշակույթի կարևոր բաղկացուցիչներ են: Եթե

առկա չէ կամ անհայտ է մեկ այլ տարր, որի հիմամբ կարելի լինի պնդել, թե այս սրբավայրը Թուխ Մանուկ է, ապա միակ ցուցիչը ժողովրդի կողմից այդ սրբավայրին տրված անվանումն է:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐՆ ՈՒ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

Հաճախ ծեսերն ունենում են առասպելական հիմք, սակայն կարող են հանդես գալ և առանց առասպելական պատումների: Մյուս կողմից հազվադեպ չեն առասպելական պատումները, որոնք չունեն ծիսական դրսևորումներ: Թուխ Մանուկների պաշտամունքում գերակայում է հենց այս տիպը. ծիսական արարողությունները հիմնականում դուրս են մնում պատումային դաշտից, այսինքն՝ ամրապնդված չեն առասպելներով ու զրույցներով: Թուխ Մանուկ սրբավայրերի դեպքում հաճախ Թուխ Մանուկի կերպարն արտահայտվում է միայն հավատալիքային մակարդակում, այսինքն՝ հատուկ առասպել կամ ավանդություն գոյություն չունի կամ գուցե մոռացվել է. մարդիկ ուղղակի նշում են, թե ով է Թուխ Մանուկը:

1. Երազները և տեսիլքները որպես հավատալիքային դրսևորումներ

Առասպելների, ավանդազրույցների և ավանդույթների առաջացման մեջ կարևոր դեր են կատարում երազներն ու տեսիլքները: Առհասարակ բոլոր սրբերի և գերմարդկային ուժերի հետ հաղորդակցման միջոցը երազներն ու տեսիլքներն են, որոնք անգիտակցականի ամենացայտուն դրսևորումներն են և բնորոշ են ոչ միայն ժողովրդական պաշտամունքներին, այլև բնութագրական են բոլոր կրոնների համար և ունեն հին ակունքներ:

Հաճախ ժողովուրդը գերապատվություն է տալիս հենց երազի դրդումով կառուցված սրբավայրերին՝ դրանք առավել «ճշմարիտը» համարելով: Ժողովրդական սրբավայրերի նման Թուխ Մանուկի հետ ևս հաղորդակցվում են երազների և տեսիլքների միջոցով:

Նման երազները, ըստ բովանդակության, կարելի է բաժանել մի քանի խմբերի, որոնցից մեր ուսումնասիրության համար էական են հետևյալները:

Ա. Երազներ, որոնք կապված են արդեն գոյություն ունեցող սրբավայրերի հետ, որոնք հայտնի են երազ տեսնողին:

Բ. Երազներ, որոնք դառնում են սրբավայրի հիմնադրման պատճառ: Սուրբը հայտնվում է երազում և օգնության կամ խորհրդի դիմաց պահանջում է, որ իր պատվին սրբավայր հիմնեն:

Գ. Երազներ, որոնք հիշեցնում են սրբավայրի գոյության մասին և խնամք պահանջում: Այս տեսակ երազները կարելի է նաև անվանել «բուժիչ», այսպիսի երազները, թերևս, ամենաշատն են: Անկախ հեռավորությունից, սեռից ու տարիքից, նույնիսկ դավանանքից, բազմաթիվ մարդիկ երազներ ու տեսիլքներ են տեսնում սրբավայրի արտաքին տեսքին կամ անվանը համապատասխան, որոնք

պետք է այցելել ինչ-ինչ նպատակների կամ պարզապես հոգու հանգստության համար:

Երազները շատ կարևոր դեր են կատարում ժողովրդի կյանքում, այդ իսկ պատճառով նույնիսկ գոյություն ունեն մի քանի Թուխ Մանուկ կամ Ս. Մանուկ սրբավայրեր, որոնց գործառույթներից է նաև վատ երազներից ազատելը:

Թեև Թուխ Մանուկները շատ տարածված սրբավայրեր են, սակայն նրա մասին բանահյուսական նյութերը սակավ են, որի պատճառով էլ շատ քիչ են տվյալները Թուխ Մանուկի ով լինելու և արտաքին տեսքի մասին: Սրբի տեսքի և կերպարի մասին որոշակի պատկերացումներ են տալիս հենց երազներն ու տեսիլքները: Եթե ավանդությունները հիմնականում պատմում են Թուխ Մանուկի ով լինելու կամ որևէ գործողության մասին, ապա երազներում և տեսիլքներում սուրբը հաճախ հայտնվում է կերպարանավորված, և կարելի է արդեն խոսել նրա տեսքի, տարիքի, զգեստների մասին: Պետք է նշել, որ Թուխ Մանուկ սուրբը կարող է լինել տարբեր տարիքի, հագած լինել տարբեր ձևի և գույնի զգեստներ, նույնիսկ տարբեր սեռեր ունենալ, այսինքն՝ սրբի արտաքին տեսքը ևս շատ տարբեր է և ընդհանուր չէ:

2. Թուխ Մանուկը որպես եկեղեցու փոխարինող

Թուխ Մանուկ սրբավայրերը շատ դեպքերում կարող են լինել եկեղեցու փոխարինողներ: Այն բնակավայրերը, որոնք ինչ-ինչ պատճառներով չեն ունեցել կամ չունեն եկեղեցիներ, եկեղեցու գործառույթն իր վրա կարող է վերցնել Թուխ Մանուկ սրբավայրը՝ դառնալով հոգևոր կենտրոն: Սակայն Թուխ Մանուկը կարող է ունենալ եկեղեցու գործառույթներ ոչ միայն եկեղեցու բացակայության պատճառով, այլ նաև դրանց չգործելու հանգամանքից ելնելով: Ոչ վաղ անցյալում, երբ խորհրդային կարգերի ճնշմամբ փակվել էին եկեղեցիները, Թուխ Մանուկ սրբավայրերը հաճախ կատարում էին եկեղեցու դերը:

Արագածոտնի Հացաշեն, Սուսեր, Նոր Արթիկ գյուղերը չունեն եկեղեցի (ժողովրդական լեզվով ասած՝ ժամ՝ գյուղական գործող ծիսակատար եկեղեցի): Այս գյուղերի սրբավայրերում կատարվում են մկրտություններ և պսակ, այցելում են եկեղեցական տոներին:

Քիչ չեն դեպքերը, երբ Արևմտյան Հայաստանից կամ Իրանից գաղթածները հին եկեղեցիների ավերակները, նույնիսկ կանգուն եկեղեցիները դարձնում էին ուխտավայրեր, իսկ ահա եկեղեցական ծիսակատարությունների համար գյուղի կենտրոնական մասում հաճախ համայնքային ծախսով առանց մասնագետ-ճարտարապետի մասնակցության, կառուցում էին նոր եկեղեցիներ: Այսօր էլ շատ բնակավայրերում «ժամ»-ի դեր են կատարում XIX դ. երկրորդ կեսին կառուցած բազմաթիվ անշուք, պարզ հատակագծով, բազիլիկ տիպը հիշեցնող եկեղեցիները:

Առայժմ մեզ հաջողվել է գտնել միայն մեկ Թուխ Մանուկ, որն ի սկզբանե կառուցվել և օծվել է որպես Թուխ Մանուկ եկեղեցի: Խոսքը Բոլորաբերդի կիսավեր եկեղեցու մասին է, որից այսօր կանգուն են միայն պատերը:

Ըստ «եկեղեցի» հասկացության առաջին իմաստի (եկեղեցի նշանակում է հավատացյալ ժողովրդի հանրություն)՝ հոգևորականները դեպի սրբավայրեր, մասնավորապես Թուխ Մանուկներ, ուխտագնացությունների պարագայում քրիստոնեության հանդեպ հակասություններ չեն տեսնում:

Ուխտագնացությունների, ծիսակատարությունների, նվիրատվությունների միջոցով ժողովուրդը հաղորդակից է լինում իր նախնիներին: Հաճախ այդպես էլ մեկնաբանում են. իրենք գնում են սրբավայր ուխտի, քանի որ սովորել են պապերից, և դա է վայել հայ քրիստոնյային: Ժողովրդական ընկալումների համաձայն այն ամենը, ինչ ընդունելի է սրբավայրում, բացառապես քրիստոնեական է:

3. Կրկնակի անուններով և այլ սրբավայրերի հետ ուխտագնացության համալիր կազմող Թուխ Մանուկ սրբավայրերը

Գոյություն ունեն մի շարք Թուխ Մանուկ սրբավայրեր, որոնք կրում են կրկնակի անուններ, այսինքն՝ բացի Թուխ Մանուկ անվանումից, դրանց այլ անունով էլ են կոչում, երբեմն երկուսը միասին: Մի շարք Թուխ Մանուկ սրբավայրեր էլ կապված են այլ սրբավայրերի հետ՝ կազմելով ուխտագնացության համալիր: Այսինքն, որպեսզի ուխտն ընդունելի լինի, միևնույն ուխտագնացության ընթացքում պետք է այցելել մի շարք սրբավայրեր, որոնց թվում և՝ Թուխ Մանուկ:

Թուխ Մանուկ սրբավայրը երբեմն զույգ է կազմում Ս. Գևորգ սրբավայրի հետ: Նման սրբավայրեր հայտնի են Բագրևանդի Կողբ, Արգել գյուղերում, Ապարանի Զովունի գյուղատեղիում, Մարտունի քաղաքում:

Թուխ Մանուկը կապված է Ս. Սարգիս մատուռի հետ Գեղաշենում: Նույն կերպ զույգ սրբավայրեր են համարվում Ողջաբերդի Թուխ Մանուկն ու Ս. Սարգիս մատուռները: Մեծ Պարնի գյուղում գտնվում է Ս. Սարգիս-Թուխ Մանուկ մատուռը, որի մեջ կա ինչ-որ նահատակի գերեզման: Գոգարանի Թուխ Մանուկը ևս կապված է լեռներում գտնվող Ս. Սարգիս մատուռի հետ:

Երբեմն Թուխ Մանուկը կարող է համարվել կամ կապ ունենալ Ս. Կարապետի հետ: Քուչակի Թուխ Մանուկը համարվում է հենց Ս. Կարապետը, ուստի մատուռն էլ կոչվում է Թուխ Մանուկ-Ս. Կարապետ: Ակունքի երկու Թուխ Մանուկներից մեկը, որ գտնվում է դաշտերում, նույնպես կոչվում է Ս. Կարապետ-Թուխ Մանուկ:

Թուխ Մանուկը կարող է կապվել Ս. Աստվածածնի հետ: Հայտնի ամենահին Թուխ Մանուկներից մեկը՝ Ճալեթա Թուխ Մանուկը եղել է Ս. Աստվածածին վանքի (Ճալեթավանք) ժողովրդական անվանումը: Ս. Աստվածածնա տոնին Բագրևանդի Խաստուրի եկեղեցու ուխտավորները պարտադիր այցելում էին և Թուխ Մանուկ, որ ուխտը հաստատ կատարվի:

Հետաքրքիր է Թուխ Մանուկի և Ս. Մամասի կապը: Մեզ հայտնի է երկու այդպիսի սրբավայր, որոնք գտնվում են իրարից շատ հեռու, մեկը՝ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գյուղում, մյուսը՝ Սասունի Իշխանաձորում:

Ըստ Ղ. Ալիշանի՝ Ճահուկ-Շահապոնք գավառում միևնույն ուխտագնացության համալիրում էին գտնվում Նահատակի սրբավայրն ու Թուխ Մանուկը: Նշենք,

որ հավանաբար այս Թուխ Մանուկն է համարվում Ելփինի Թուխ Մանուկի (եղբայր) քույրը: Թուխ Մանուկ և Ս. Նահատակ սրբավայրերը ուխտագնացության համալիր են կազմում նաև Ճոճկան գյուղում:

Առավել հաճախ Թուխ Մանուկը կապված է տերունական Ս. Նշանի հետ: Կրկնակի Թուխ Մանուկ-Ս. Նշան անունն են կրել Ճալեթի, Սադուգեղի և Վանի համապատասխան սրբավայրերը: Քաջբերունիքում եղել է Մանուկ Սուրբ Նշան անապատը: Սոլակում Ս. Նշան և Թուխ Մանուկ զույգ սրբավայրերը գտնվում են միևնույն տան բակում: Վարդենիսում հայտնի տան սրբերից է Սբխեչ-Թուխ Մանուկը: Թուխ Մանուկ Ս. Նշանը նաև հիշվում է երգերում, որտեղ այն սիրահարի հովանավոր-օգնականն է:

4. Թուխ Մանուկ կերպարը

Մեր կարծիքով անիմաստ է և նույնիսկ վտանգավոր ընդհանրացնել բոլոր Թուխ Մանուկ սրբավայրերը՝ ելնելով միայն դրանց նույն անվանումից կամ, որն ավելի զավեշտալի է, «մանուկ» բառի առկայությունից: Առավել ևս, որ ո՛չ «մանուկ» բառը, ո՛չ «Թուխ Մանուկ» անվանումը Թուխ Մանուկ սրբավայրերի պաշտամունքի մասին ոչինչ չեն ասում:

4.1. Թուխ Մանուկը որպես նախնի: Թուխ Մանուկներին որպես նախնի-պահապաններ էին ընկալում տարոնցիները: Ըստ նրանց՝ Թուխ Մանուկները սրբեր են, որ բնակվում են մատուռներում և համարվում են տվյալ գյուղերի հսկողներ, որոնք բարի մարդկանց շնորհներ են պարգևում, իսկ չարերին պատժում են:

Թուխ Մանուկներին՝ որպես երկնային նախնի-պահապանների ներկայացնում է նաև Վ. Տեր-Մինասյանը, այս դեպքում՝ արդեն Վանում, որտեղ նրանք անվանվում էին «երկնքի լույս թուխ մանուկներ»: Նման մի ավանդություն-հավատալիք կա նաև Մաստարայում, որտեղ Թուխ Մանուկը համարվում է Հիսուս Քրիստոսի ընկերն ու նրանից զորություն ստացած: Մեղրաձորի Թեժառույք-Թուխ Մանուկին ուղղված աղոթքներում ևս շեշտվում է սրբի պահապան զորությունը, հատկապես երիտասարդ սիրահարների, հիվանդների և զինվորների դեպքում:

Կան Թուխ Մանուկ սրբավայրեր, որոնք կոչվում են Պաբե, Պապ: Պաբե, Պապ անվանումների հիմնական նշանակություններն են՝ հայրապետ, նախահայր, որը ցուցում է, որ տվյալ սրբավայրերը հիմնադրվել են իրենց նախահայրերի կողմից, սակայն անպայման չէ, որ հենց Թուխ Մանուկ սուրբն է համարվում իրենց նախնին:

4.2 Թուխ Մանուկը որպես նահատակ: Առաջինը Թուխ Մանուկներին որպես նահատակներ դիտարկում է Գարեգին եպս. Սրվանձտյանցը: Սուրբ հավատքի համար նահատակվածների թափած արյան կամ նրանց թաղման տեղերն են այդ սրբավայրերը, որ նույնպես պաշտել է ժողովուրդը: Որպես հիմնավորում՝ Սրվանձտյանցը «Թուխ Մանուկ» ստուգաբանում է. դրանք մանուկներ են՝ խլված իրենց մայրերից կամ մորթված նրանց գրկի մեջ՝ հանուն քրիստոնեության անվան և սիրո, թուխ են՝ թաթախված լինելով բոսորային արյան մեջ:

Մշո աշխարհում շատ կային Թուխ Մանուկ ուխտավայրեր, որոնք եկեղեցիներ ու եկեղեցու քաջ նահատակների գերեզմաններ էին:

Թուխ Մանուկ սրբավայրերը՝ որպես անանուն կամ նորահայտ նահատակ սրբի գերեզման են համարում Հ. Աճառյանն ու Ս. Մալխասյանը: Թուխ Մանուկների՝ որպես զինվոր-նահատակներ մասին են խոսում նաև Մ. Մկրյանը և Մեսրոպ արք. Սմբատյանցը: Թուխ Մանուկներին՝ որպես հերոս-զինվոր են դիտարկում Մեսրոպ արք. Աշճյանը և Հ. Խառատյան-Առաքելյանը:

Բավական շատ Թուխ Մանուկ սրբավայրերում կան տապանաքարեր, որոնք համարվում են Թուխ Մանուկի գերեզմանը: Թեև դրանք այնքան էլ շատ չեն, սակայն Թուխ Մանուկի մասին՝ որպես նահատակ, պատկերացումը լայն տարածում ունի: Որոշ դեպքերում այդ պատկերացումն արտահայտվում է ավանդության տեսքով: Այդ ավանդություններն իրենց կառուցվածքով փոքրիկ վկայաբանություններ են. Թուխ Մանուկը նահատակվել է վաղ հասակում կամ այլազգի է եղել, ընդունել է քրիստոնեություն, որի համար նրան սպանել են:

4.3. Թուխ Մանուկը որպես զինվոր-հերոս: Միշտ չէ, որ Թուխ Մանուկը միայն հանուն հավատի նահատակ է: Գրեթե բոլոր Թուխ Մանուկ սրբավայրերը զինվորի պաշտպաններ են: Այս հանգամանքը հնարավոր է բացատրել այն փաստով, որ որոշ Թուխ Մանուկ սրբավայրերի դեպքում ակնհայտ կապ կա զինվոր-հերոսների պաշտամունքի հետ:

Այսպես՝ Սասունի Գելիեգուզան գյուղում Թուխ Մանուկ եկեղեցուն կից գտնվում էր հերոսների պանթեոնը, ուր ամփոփված էին Սերոբ Աղբյուրը, Հրայր Դժոխքը, Իշխան Պետոն և այլ հերոսներ: Գեղհովիտի Թուխ Մանուկը կապված է Գարեգին Նժդեհի զինվորի հետ:

Թերևս Թուխ Մանուկների և հերոսների պաշտամունքի միջև կապը նկատելի է մի երգում՝ գրանցված Թեղենիք (նախկինում՝ Թղիթ) գյուղում: Երգի տողերից պարզ է դառնում, որ Թուխ Մանուկները, համենայն դեպս Ալաշկերտում և Կոտայքում, ընկալվել են որպես Հայոց աշխարհի պահապան հոգի-զինվորներ:

Որպես զինվորների պահապան՝ Թուխ Մանուկը հատուկ հիշատակվում է աղոթքների մեջ: Սա է թերևս պատճառը, որ այդքան տարածված են բանակ կամ պատերազմ գնալիս Թուխ Մանուկ սրբավայրերից ծոցում քար պահելը և այդ սրբավայրերում մատաղի արարողություններ կատարելը:

Թուխ Մանուկի՝ որպես նախնի-նահատակ-զինվորի ընկալմանը, թերևս, նպաստում են «մանուկ» բառի իմաստները: Բանն այն է, որ «մանուկ» բառի միջ-նադարյան առաջնային ընկալումներից էին զինվորը, չամուսնացած տղամարդը և ուսումնականը: Այսինքն՝ «մանուկ» ասելով հաճախ ցուցում էին ոչ միայն տարիքը, այլև կարգավիճակը:

Զինվորը հայրենիքի պաշտպանն է, և նրա զոհվելը միշտ ընկալվում է որպես հանուն հայրենիքի նահատակություն: Այս գաղափարից հեռու չէ նաև հանուն հավատի նահատակությունը, մանավանդ որ մինչև խորհրդային կարգերը հավատն ու հայրենիքը նույնական էին: Այսինքն՝ զինվորը այն մարդն էր, որ կարող էր զոհվել հանուն հայրենիքի և հավատի ու այդպիսով միավորել իր մեջ

նահատակության երկու տեսակները: Այսինքն՝ Թուխ Մանուկը թուխ մաշկով կամ լերդացած արյան վերքերով սգացվող նահատակ-զինվոր-նախնին է:

4.4. Թուխ Մանուկը որպես Հիսուս Քրիստոս: Ըստ ժողովրդական ընկալումների՝ որոշ դեպքերում Թուխ Մանուկը Քրիստոսն է, կամ սրբավայրը կառուցվել է Քրիստոսի հանգստյան տեղում: Որոշ դեպքերում Թուխ Մանուկը ուղղակի Մանուկ Հիսուսի անվանումն է: Որոշ Թուխ Մանուկ սրբավայրեր ունեն ավանդություններ՝ կապված Քրիստոսի հետ, իսկ մնացած Թուխ Մանուկներից մեծ մասը Քրիստոսն է հավատալիքային մակարդակում:

Վանի շրջակայքում, հավանաբար Ոստանում, եղել են Թուխ Մանուկ անվամբ գետնափոր մի սրբավայր և շիրմաքար, որ համարվում է Թուխ Մանուկի գերեզմանը: Այս սրբավայրի մասին պատմվող ավանդությունը շատ նման է Քրիստոսի մանկության ավետարանների որոշ դրվագներին:

Դիարբեքիրի շրջանի Սադուգեղի Ս. Խաչ Թուխ Մանուկի ավանդության համաձայն՝ Թադեոս առաքյալին Թուխ Մանուկը տալիս է խաչքար, որն առաքյալը պատվանդանի հետ տեղափոխում է Սուրբ Խաչ Թուխ Մանուկ եկեղեցու խորանը: Իսկ եկեղեցու մոտի աղբյուրն էլ այդ օրվանից անվանվում է Խաչ-Աղբրիկ: Այս սրբավայրի և ավանդության մասին մի երգ է գրանցել Վ. Տեր-Մինասյանը: Սուրբ Խաչը օրհնող և որպես քրիստոնեական նշան թողնող Թուխ Մանուկը կարող էր լինել միայն Քրիստոսը:

Մեզ հայտնի հնագույն Թուխ Մանուկ և Ս. Մանուկ սրբավայրերի հիմնական մասն ունի Սուրբ Նշան կամ Սուրբ Խաչ հավելյալ անվանումը (տես գլուխ 2. 3): Այս հանգամանքը ենթադրության տեղ է թողնում. քանի որ Սուրբ Նշանը վերաբերում է միայն Քրիստոսին, ապա Մանուկ անվան տակ պետք է հասկանալ հենց Հիսուս Քրիստոսին: Հնարավոր կարելի է համարել, որ ամենահին Թուխ Մանուկ սրբավայրերը նվիրված են եղել Քրիստոսին:

Ալափարսի Թուխ Մանուկը նվիրված է Քրիստոսին, քանի որ աշխարհով շրջելու և քրիստոնեություն տարածելու ընթացքում այս տեղը եղել է Հիսուսի հանգստյան վայրերից մեկը: Նման ավանդություն կա նաև Նիգավանում: Արևշատի Եղիշի տան Թուխ Մանուկի դեպքում պատմում են, որ Թուխ Մանուկը Քրիստոսն է, որ ամպին նստած երբեմն իջնում է մատուռի վրա:

Որոշ բանահյուսական նյութերում Հիսուս Քրիստոս անվանվում է Մանուկ Տղա: Տղա Մանուկն արտահայտված է ոչ միայն բանահյուսության մեջ: Այսպես՝ Սասունի Դալիոր գյուղում եղել է Ս. Տղամանուկ եկեղեցի, իսկ Բրհայում՝ Տղամանուկ մենաստան:

Հետաքրքիր կապ կա Թուխ Մանուկ և Ամենափրկիչ մատուռների միջև: Խաստուրի հռչակավոր Թուխ Մանուկ սրբավայրը հայտնի էր նաև Ս. Ամենափրկիչ անունով: Ներքին Գետաշենի Ամենափրկիչ մատուռը դեռևս XIX դ. վերջերին կոչվում էր Թուխ Մանուկ և շրջակա գյուղերի գլխավոր ուխտատեղին էր: Մյուս հայտնի Ս. Ամենափրկիչ և Թուխ Մանուկ կրկնակի անունները վերաբերում են Կոտայքի Նոր Գեղիի և Աբովյան-Էլառի մեջտեղում ընկած մատուռին և տարածքին: Յուրահատուկ զույգ են կազմում նաև Արտաշավանի Ս. Ամենափրկիչ եկեղեցին և

Թուխ Մանուկ սրբավայրը, որոնք իրար մոտ են, և երկուսն էլ գերեզմանոցի տարածքում են:

Անկասկած է, որ Ամենափրկիչը Քրիստոսի կայուն փոխանուններից է:

Արդեն դիտարկված Ս. Թուխ Մանուկ կամ Ս. Մանուկ ավետարանների անվանումը, ամենայն հավանականությամբ, կապված է այն փաստի հետ, որ Քրիստոս նույնպես անվանվում է Մանուկ: Քանի որ ավետարանները հիմնականում պատմում են Քրիստոսի մասին, ապա մի քանի պաշտվող ավետարաններ կարող էին ստանալ Ս. Մանուկ կամ Ս. Թուխ Մանուկ անունը: Այսպիսով՝ Թուխ Մանուկ, Ս. Մանուկ, Տղամանուկ սրբավայրերը կարելի է դիտարկել որպես Քրիստոսին նվիրված սրբավայրեր, քանի որ Մանուկը Քրիստոսի կայուն փոխանուններից է:

4.5. Թուխ Մանուկը որպես Ս. Կարապետ: Աղբյուրներն ու դաշտային հետազոտությունները ցույց են տալիս, որ Թուխ Մանուկը որպես Ս. Կարապետ այդքան էլ տարածված պատկերացում չէ:

Քուչակի Թուխ Մանուկը համարվում է հենց Ս. Կարապետը, ուստի մատուռն էլ կոչվում է Թուխ Մանուկ-Ս. Կարապետ: Սա պարզապես հավատալիք է, քանի որ ավանդազրույց այն մասին, թե ինչո՞ւ է Ս. Կարապետը Թուխ Մանուկ, այստեղ գոյություն չունի: Ակունքի երկու Թուխ Մանուկներից մեկը նույնպես կոչվում է Ս. Կարապետ-Թուխ Մանուկ:

Աշուղները, որոնք իրենց շնորհի համար պարտական էին Մշո սուլթան Սուրբ Կարապետին, մտնելով որևէ քաղաք, գյուղ և բնակավայր, գովերգում էին սրբին: Ըստ Վահան վարդ. Տեր-Մինասյանի, այդ երգերից մի քանիսը ստեղծել էր Անպոչ ճգնավորը, որի երգերը երգում էին մայրավանքերում, Թուխ Մանուկ սրբավայրերում և Լուսաղբյուրների մոտ: Այդ երգերում երբեմն հիշատակվում է Թուխ Մանուկը, որոնցից մի քանիսը հրատարակել են Ռ. Պատկանյանը, Վ. Տեր-Մինասյանը, Ս. Հայկունին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Թուխ Մանուկ սրբավայրերը լայնորեն տարածված են եղել Հայկական լեռնաշխարհում, ըստ աղբյուրների՝ հատկապես Վանի շրջակայքում և Վասպուրականում, Հարքում, Տարոնում, Բագրևանդում և այլն, որոնք եղել են տարբեր բնույթի պաշտամունքավայրեր: Աղբյուրներում հիշատակվում են նաև Թուխ Մանուկ անունով մի քանի ավետարաններ, որոնք Թուխ Մանուկի պաշտամունքի յուրահատուկ դրսևորումներ են:
- Թուխ Մանուկ և Ս. Մանուկ անվամբ հայտնի ամենահին սրբավայրերը որոշակիորեն կապված են Սուրբ Նշանների հետ: Ամենահին տվյալները վերաբերում են Քաջբերունիքի Նվնդի Նորշինա գյուղի մերձակայքում եղած Մանուկ Սուրբ Նշան կամ Նորշինա անապատին, որը հիշատակվում է 1390 թ. մի հիշատակարանում, և Ճալեթի Ս. Աստվածածին վանքին (1411 թ.) (Ճալեթա վանք), որի ժողովրդական անունն էր Ճալեթա Թուխ Մանուկ:

- ՀՀ տարածքում այժմ գործող Թուխ Մանուկ սրբավայրերից գրեթե բոլորը ստեղծվել կամ այդպես են անվանվել Արևմտյան Հայաստանից և Իրա նից 1828 թ. հետո, տարբեր ժամանակահատվածներում գաղթածների կողմից: Հատկապես շատ են Թուխ Մանուկ սրբավայրերը Տարոնից, Բագրևանդից, Հարքից, Բասենից, Վանից և շրջակայքից, Մակվից և Խոյից գաղթածների մեջ:
- ՀՀ Թուխ Մանուկ սրբավայրերի գերակշիռ մասը ստեղծվել է ավելի հին սրբավայրերի, եկեղեցիների, մատուռների հիմքի վրա՝ երբեմն վերանորոգելով դրանք, երբեմն թողնելով անփոփոխ: Որոշ դեպքերում նույնիսկ կանգուն վանքը կամ եկեղեցին ստացել է Թուխ Մանուկ անվանումը:
- Թուխ Մանուկ սրբավայրերը կարող են լինել մատուռներ, եկեղեցիներ, դոլմեններ, մենհիրներ, «վիշապանման» սյուներ, խաչքարեր, ժայռեր և ժայռաբեկորներ, գետաքարերի կույտ, խարիսխներ, քարանձավներ, տապանաքարեր, ավետարաններ և այլն:
- Որոշ քանակի Թուխ Մանուկներ էլ հանդիսանում են տնային սրբեր և գործում են տներին կից: Տնային սրբեր են հատկապես Թուխ Մանուկ և Ս. Մանուկ ավետարանները:
- Թեև Թուխ Մանուկ սրբավայրերը ունեն էթնիկ տարածվածություն, այդուամենայնիվ Հայաստանի Հանրապետության տարածքում Թուխ Մանուկ սրբավայրեր առայժմ չեն հայտնաբերվել ներկայիս Սյունիքի և Տավուշի մարզերում, նաև Արցախում: Թուխ Մանուկների մասին տեղեկություններ մեզ չի հաջողվել գտնել նաև Պատմական Հայաստանի որոշ նահանգներում և գավառ ներում, հայաշատ վայրերում՝ Տայք, Երզնկա, Դերսիմ, Խարբերդ, Մալաթիա, Սեբաստիա, Կիլիկիա և այլն: Այդանուն սրբավայրերի գոյության մասին առայժմ չկան տվյալներ նաև Սփյուռքի առնչությամբ:
- Մեր օրերում նույնպես տարածված են ուխտագնացությունները դեպի Թուխ Մանուկ սրբավայրեր: Եթե XIX դ. կեսերի-XX դ. սկզբների աղբյուրները վկայում են, որ այդ սրբավայրերը այցելում էին հիմնականում միջին տարիքի և ծեր կանայք, ապա մեր օրերում Թուխ Մանուկ սրբավայրեր այցելում են նաև տղամարդիկ և երիտասարդները:
- Դեպի Թուխ Մանուկ սրբավայրեր ուխտագնացությունները կատարվում են որևէ եկեղեցական տոնի համալիրում (հատկապես Վարդավառ, Զատիկ, Համբարձում, Խաչվերաց տոներին և մեռելոցներին), որոշ Թուխ Մանուկներ ունեն իրենց հատուկ օրը, որոշ սրբավայրեր էլ այցելում են շաբաթվա տվյալ օրերին, հատկապես շաբաթ և կիրակի: Որոշ Թուխ Մանուկ սրբավայրեր այցելում են դիպվածով. սա առաջին հերթին վերաբերում է ճանապարհների հանգույցներում գտնվող սրբավայրերին: Բոլոր Թուխ Մանուկ սրբավայրերը, անկախ այն բանից, ունեն ուխտի հատուկ օրեր, թե ոչ, այցելում են ցանկացած օր, տարբեր ժամերի. երբ պահանջ է առաջանում:
- Թուխ Մանուկ սրբավայրերի ուխտագնացության ժամկետները տարբեր են, սակայն ուխտագնացության նպատակներն ու ծիսական արարողությունները մեծ մասամբ միմյանցից չեն տարբերվում: Բոլոր Թուխ Մանուկ սրբավայրերում տարածված արարողություն է մատաղը: Ուխտավորները հիմնականում մոմ են

վառում, խունկ են ծխում, յոթ կամ երեք անգամ պտտվում են սրբավայրի շուրջը, իրենց ուխտ-ժապավեններն են կապում սուրբ ծառերին՝ մուրազները կատարվելու, հիվանդություններն այնտեղ թողելու և այլ ակնկալիքներով, սրբավայրի պատերին են փակցնում երազանքի քարեր: Բուժիչ աղբյուրների առկայության դեպքում որոշակի ծեսեր են կատարում՝ բուժման ակնկալիքով:

- Բոլոր Թուխ Մանուկ սրբավայրեր այցելում են հիմնականում բժշկվելու, զավակատվության և երեխաների խնամքն ապահովելու, զինվորների պաշտպանության, պտղաբերություն ապահովելու, սիրահարների հովանավորության և այլ նպատակներով:
- Թուխ Մանուկների և ժողովրդական այլ սրբավայրերի համեմատական դիտարկումը թույլ է տալիս եզրակացնել, որ այն գործառույթները, որոնք բնորոշ են Թուխ Մանուկներին, միայն այդ սրբավայրերի առանձնահատկությունները չեն: Այս դրույթը վերաբերում է նաև սրբավայրերի կառույցների տիպին. Թուխ Մանուկները սրբավայրերի առանձին տեսակներ չեն: Այսինքն՝ զուտ անունով են Թուխ Մանուկ սրբավայրերը տարբերվում հայ ժողովրդական քրիստոնեական այլ սրբավայրերից:
- Պաշտամունքի, հավատալիքների և բանահյուսական տվյալների քննությունը ցույց է տալիս, որ Ս. Թուխ Մանուկը միանշանակ կերպար չէ: Ավանդությունների մեծ մասում Թուխ Մանուկը այլազգի կամ այլադավան մի պատանի է (քուրդ, պարսիկ և այլն), որը մատնանշում է նրա «թուխ» բնորոշումը որպես մաշկի թխություն (ի տարբերություն հայի), որին սպանել են քրիստոնեություն ընդունելու համար: Այստեղից այն հետևությունը, որ «թուխ» բառը ցուցում է մաշկի գույնը: Թուխ Մանուկը հիմնականում ընկալվում է որպես նախնի, նահատակ, զինվոր-հերոս, Հիսուս Քրիստոս:
- ՀՀ-ում մեր ունեցած տվյալներով ներկայումս հայտնի է 196 (սրա մեջ ներառվել են նաև ներկայումս այլ անուն կրող կամ այժմ գոյություն չունեցող) Թուխ Մանուկ սրբավայրեր:
- Թուխ Մանուկի պաշտամունքը այսօր էլ մեծ հարգանք ու սեր է վայելում ժողովրդի մեջ, դեպի այդ սրբավայրերը շարունակվում են մարդաշատ ուխտերը, այդ սրբավայրերի և Թուխ Մանուկի մասին առաջանում են նոր ավանդազրույցներ:

Ատենախոսության բովանդակությունն արտացոլված է հեղինակի հրատարակած հետևյալ աշխատանքներում

1. Կ. Հովհաննիսյան, Գեղարքունիք. մի քանի Թուխ Մանուկ սրբավայրերի մասին, Տարեգիրք, Աստվածաբանության ֆակուլտետ, Երևան, 2014, Թ., էջ 208-225:

2. Կ. Հովհաննիսյան, Թուխ Մանուկը բանահյուսական սկզբնաղբյուրներում, «Էջմիածին», Ս. Էջմիածին, 2016, Բ., էջ 69-95:

3. Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան, Թուխ Մանուկ սրբավայրերի տոնածիսական սովորույթների շուրջ (համահեղինակ՝ Լ. Սիմոնյան), Տարեգիրք, Աստվածաբանության ֆակուլտետ, Երևան., 2016, ԺԱ., էջ 113-133:

4. К. Оганнисян, Святилище Тух Манук в селе Лусагюх, «Живая старина», Москва, 2017, 3, с. 25-27.

5. Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան, Մատաղը ժողովրդական սրբավայրում (համահեղինակ՝ Լ. Սիմոնյան), Տարեգիրք, Աստվածաբանության ֆակուլտետ, Երևան, 2017, ԺԲ., էջ 173-185:

6. Կ. Հովհաննիսյան, Ս. Յիզտբուզիտ, Ս. Դավիթ Դվնեցի և Թուխ Մանուկ, «Էջմիածին», Ս. Էջմիածին, 2018, Ժ., էջ 68-89:

7. Կ. Հովհաննիսյան, Թուխ Մանուկ ավետարանները, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2019, 3, էջ 242-255:

ОГАННИСЯН КАРЕН ОГАННЕСОВИЧ

СВЯТИЛИЩА ТУХ МАНУК

(Историко-этнографическое исследование)

РЕЗЮМЕ

Святилища Тух Манук были широко распространены на Армянском нагорье, согласно источникам – особенно в районе Вана и в Васпуракане, в hАрке, Тароне, Багреванде и др., которые были разного рода культовыми местами. Упоминаются также евангелия Тух Манук, которые являются особым видом культа Тух Манук.

Самые древние известные святилища Тух Манук и Св. Манук связаны с Св. Крестом. Древнейшие данные относятся к скиту Манук Св. Крест или скит Норшина, находящемуся в гаваре Каджберуник, который упоминается в 1390 г., и к монастырю Св. Богоматери (1411 г.) в Чалете (гавар Капалак в Алуанке), который в народе назывался Тух Манук Чалета.

Большинство действующих на территории РА святилищ Тух Манук были созданы или названы так переселенцами из Западной Армении и Ирана, мигрировавшими в разное время, начиная с 1828 г., в Восточную Армению. Особенно много святилищ Тух Манук на территориях, заселенных переселенцами из Тарона, Багреванда, hАрка, Басена, Вана, Маку и Хоя.

Подавляющее большинство святилищ Тух Манук было создано на основаниях более древних святилищ, церквей, *матур*ов (часовен) – иногда их отстраивали, иногда оставляли неизменными. В некоторых случаях даже уцелевший монастырь назывался Тух Мануком.

Святилищами Тух Манук могут быть матуры, церкви, дольмены, менгиры, вишапоидные стелы, хачкары, скалы и каменные глыбы, кучи гальки, пещеры, надгробия, евангелия и др. Некоторое количество Тух Мануков является домашними святынями. В особенности это касается евангелий Тух Манук и Св. Манук.

Хотя святилища Тух Манук являются этнической особенностью армянского народа, тем не менее они доныне не обнаружены в Сюнике, Тавуше и Арцахе. Нам не удалось найти сведений о святилищах Тух Манук в некоторых областях и регионах исторической Армении и на территориях, некогда населенных армянами – Тайк, Ерзнка, Дерсим, Харберд, Малатия, Себастия, Киликия и др. О существовании этих святилищ пока нет данных и по отношению к армянской диаспоре.

В наши дни также распространены паломничества к святилищам Тух Манук. Если источники конца XIX в. – начала XX в. свидетельствуют, что эти святилища посещали в основном женщины среднего и пожилого возраста, то в наши дни эти святилища посещают также мужчины и молодежь.

К святилищам Тух Манук паломничества совершаются в комплексе какого-либо церковного праздника (особенно Вардавар, Пасха, Вознесение, Воздвижение Св. Креста),

некоторые из этих святилищ имеют свои особенные дни, другие посещаются в конкретные дни недели, преимущественно в субботу и воскресенье. Части этих святилищ присущи окказиональные паломничества. Все святилища Тух Манук, независимо от существования особых паломных дат, посещают в любой день и в любое время – когда возникает надобность.

Сроки паломничества разные, но цели и обрядовые действа в большинстве не отличаются друг от друга. Во всех святилищах Тух Манук распространен *матах* – ритуальное жертвоприношение. Паломники в основном зажигают свечи, воскуряют ладан, семь или три раза хороводят вокруг святилища, завязывают свои ленты на ветках священных деревьев для исполнения желаний и излечения недугов и т. д. Если при святилище есть лечебные родники, то при них совершаются некоторые обряды с применением воды.

Все святилища Тух Манук посещают в основном с целью исцеления, рождения детей и заботы об их здоровье и безопасности, защиты солдат, обеспечения плодородия, покровительства влюбленным и прочее.

Сравнительное рассмотрение Тух Мануков и других народных святилищ позволяет сделать вывод, что функции, присущие святилищам Тух Манук, не являются их исключительной характеристикой. Это относится и к типу конструкции святилищ – святилища Тух Манук не являются особым типом святилищ. Т. е. только название отличает святилища Тух Манук от других народных святилищ.

Данные культа, верований и фольклора показывают, что образ Тух Манука неоднороден. В большинстве легенд Тух Манук – иноэтничный или иноверный отрок (курд, перс и др.), что маркируется его эпитетом «смуглый» (в отличии от армян), который принял мученическую смерть за принятие христианства от бывших едино верцев. Тух Манук в основном воспринимается как предок, мученик, воин-герой, Иисус Христос.

По нашим данным на территории РА на сегодня известны 196 святилищ Тух Манук, в т. ч. утерянные и переименованные святилища.

Культ Тух Манука по сей день имеет большой почет и любовь в народе, к этим местам продолжают совершаться многочисленные паломничества, о святом Тух Мануке и об этих святилищах слагают новые легенды.

HOVHANNISYAN KAREN

THE SANCTUARIES TUKH MANOOK

(Historical and Ethnographic Study)

SUMMARY

Sanctuaries named Tukh Manook have been widely distributed in the Armenian Highlands, according to sources – mostly in and around the city of Van, in the regions of Vaspurakan, Hark, Bagrevand etc. All of them were holy places and shrines of different character. Sources also mention worshipped gospels called Tukh Manook, which are a peculiar kind of Tukh Manook cult.

The most renowned sanctuaries Tukh Manook and St. Manook are connected with the Holy Cross. The oldest data relate to the monastery Manook St. Cross or Norshina monastery, situated in the province of Kajberunik and mentioned in 1390, and to the St. Mother of God monastery (1411) in Chalet (region Kapalak in Aluank) popularly called Chalet's Tukh Manook.

Almost all the sanctuaries Tikh Manook now functioning in the territory of RA have been founded or named by the migrants from the Western Armenia and Iran to the Eastern Armenia in several groups during the period after 1828. Especially on the territories inhabited by immigrants from Taron, Bagrevand, Hark, Basen, Van, Maku, and Khoy such sanctuaries are abundant.

The considerable majority of Tukh Manook sanctuaries have been founded on the base of older holy places such as churches, martyria, sometimes after a reparation, sometimes maintaining them intact. In some cases even a monastery was called Tukh Manook. Martyria, chapels, churches, dolmens, menhirs, steles in the style of *vishap*s, *khachkar*s as well as rocks and cliffs, piles of pebbles, caverns, gravestones, gospels may be Tukh Manook sanctuaries. Several Tukh Manooks are house sanctuaries. In particular that concerns Tukh Manook gospels and St. Manuk chapels.

Although sanctuaries Tukh Manook are of ethnic character, nevertheless on the territory of RA they are not found in Sunik, Tavush and Artsakh as far. Information about the Tukh Manook sanctuaries were not found concerning some regions of the historical Armenia as well as locations formerly inhabited by Armenians such as Tayk, Yerznka, Dersim, Kharberd, Malatia, Sebastia, Kilikia etc. There is no data on existence of such sanctuaries in the Armenian Diaspora.

Nowadays pilgrimage to the sanctuaries Tukh Manook is distributed, as well. If sources of the end 19th – beginning 20th centuries witness that mostly women of middle and high age visited those sanctuaries, in the present also men and youth visit them.

Pilgrimages to the Tukh Manook sanctuaries are undertaken within the complex of any religious feast (mostly Vardavar, Easter, Ascention, Elevation of St. Cross), some sanctuaries have their special holidays, others are visited on special days of the week, mostly Saturdays and Sundays. Many sanctuaries are visited occasionally. All the sanctuaries Tukh Manook independently of availability of a special feast day, may be visited at any time, if needed.

Terms of pilgrimage are different, but goals and performed rites mostly do not vary. In all of them *matagh* – ritual sacrifice – is characteristic. Pilgrims in general light candles, burn incense, move around the sacred object three or seven times to have their wishes come true and to heal their diseases, attach ribbons to the branches of sacral trees etc. If there are sacral springs nearby the shrine, they carry out some rites using water.

All the sanctuaries Tukh Manook are visited with the goal of healing, receiving children and caring after them, of protection for soldiers, delivering fruitfulness, sponsorship for those who are in love etc.

The comparative study of Tukh Manook with other folk sanctuaries allows to conclude that functions attributed to Tukh Manook holy places are not their exceptional features. That also concerns construction of sacral buildings, Tukh Manook chapels have no special traits. That means, just the name makes Tukh Manook different from the other folk sanctuaries.

Data about the cult, beliefs, and folk-lore indicate that the representation of Tukh Manuk is not always the same. In most legends Tukh Manuk is believed to be an ethnic or religious alien youth (a Kurd or a Persian etc.) which marks his epithet of "black" (in opposite to Armenians) who was martyred by his former compatriots for adopting Christian faith. Thus Tukh Manook is comprehended as an ancestor, a martyr, a warrior-hero, Jesus Christ.

Our information indicates that on the territory of RA nowadays 196 Tukh Manook sanctuaries exist, in their number – the several extinct and renamed sanctuaries.

The worship of Tukh Manook is highly respected and beloved by the folk until our days, to those places multiple pilgrimages are conducted, new legends are created about Tukh Manook and his sanctuaries.